5. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
6. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:
7. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:
8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

### 14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
  - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
  - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
  - կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողն իրավունք ունի՝
  - – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
  - – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- – փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

### **15. Եզրափակիչ դրույթներ**

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2014 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

## II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

## II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ռադիոտեխնիկայի և կապի ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ «Ռադիոտեխնիկա և կապ» ծրագրով:

## 1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
<b>ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Լրացական դասընթացներ	0	2
Ընդհանուր կրթամաս	6	2
Մասնագիտական պարտադիր կրթամաս	48	16
Կամընտրական դասընթացներ	18	6
<b>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Գիտական սեմինար	12	4
Գիտահետազոտական աշխատանք	18	4
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Գիտամանկավարժ. պրակտիկա	3	1
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>120</b>	<b>37</b>

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	24	24	24	0	72
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	6	6	6	30	48
<b>Ընդամենը, կրեդիտ</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>120</b>

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:



## 2. Ծրագրի բովանդակությունը

### 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ **լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ**: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

#### Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) <sup>8</sup>	Կիսամյակ	Գնահատման ձևը
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն	0	32/0/0	I	Ստուգարք
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն	0	32/0/0	II	Ստուգարք

#### Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատաձևավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Հեռահաղորդակցության հիմունքներ» և «Մասնագիտության փիլիսոփայական հարցեր»: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր կրթամասին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

<sup>8</sup> Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

Թվանիշ	Սոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/վ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
14/M01	<i>Հեռահաղորդակցության հիմունքներ</i>	3	32/0/0	I	Քննություն
16/M01	<i>Մասնագիտության փիլիսոփայական հարցեր</i>	3	32/0/0	I	Քննություն

### **Մասնագիտական պարտադիր կրթամաս**

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաժամային ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

1. Մագիստրոսական ծրագիր՝  
**«Ռադիոտեխնիկա և կապ»**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
14/M02	Վիճակագրական ռադիոֆիզիկա	3	23/9/0	I	Քննություն
14/M03	Ազդանշանների թվային մշակման մաթեմատիկական հիմունքներ	3	32/0/0	I	Քննություն
14/M04	Ինֆորմացիայի տեսություն	3	28/4/0	I	Քննություն
14/M05	Կոդավորման հիմունքներ	3	28/4/0	II	Քննություն
14/M06	Հեռահաղորդակցական համակարգերի էլեկտրոնային բաղադրիչներ	3	32/0/0	II	Քննություն
14/M07	Ազդանշանների թվային մշակման հաշվողական եղանակներ	3	32/0/0	II	Քննություն
14/M08	Անտենաներ և ռադիոալիքների տարածում	3	32/0/0	II	Քննություն
14/M09	Ազդանշանների թվային մշակման պրակտիկում 1	3	28/4/0	I	Քննություն
14/M10	ԳԲՀ ճառագայթման բնութագրերի չափման ֆիզիկական սկզբունքներ	3	32/0/0	III	Քննություն
14/M11	ԳԲՀ ճառագայթման բնութագրերի չափման պրակտիկում	3	32/0/0	III	Քննություն
14/M12	Արբանյակային կապի համակարգեր	3	28/4/0	III	Քննություն
14/M13	Օպտիկական կապի հիմունքներ	3	32/0/0	III	Քննություն
14/M14	Ռադիո- և հեռուստահեռարձակում	3	32/0/0	III	Քննություն
14/M22	Հեռահաղորդակցության պրակտիկում	3	32/0/0	I	Քննություն
14/M23	Ազդանշանների թվային մշակման պրակտիկում 2	3	16/16/0	II	Քննություն
14/M24	Կիրառական ԳԲՀ էլեկտրադինամիկա	3	8/22/0	III	Քննություն

### Կամրնտրական դասընթացներ

Կամրնտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ

համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցառումներ կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2-4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

1. Մագիստրոսական ծրագիր՝  
**«Ռադիոտեխնիկա և կապ»**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Փնտրման ձևը
14/M15	Շարժական կապի հիմունքներ	3	28/4/0	III	Քննություն
14/M16	Ռադիոէլեկտրոնային սխեմատեխնիկա	3	32/0/0	III	Քննություն
14/M17	Տվյալների մշակման հաշվողական միջոցներ	3	32/0/0	I	Քննություն
14/M18	Արդյունաբերական պրոցեսների և գիտափորձի	3	32/0/0	I	Քննություն
14/M19	Միկրոպրոցեսորային տեխնիկայի հիմունքներ	3	32/0/0	II	Քննություն
14/M20	Ռադիոտեխնիկական համակարգեր	3	32/0/0	II	Քննություն

**2.2. Հետազոտական կառուցամաս**

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

**Գիտական սեմինարը** ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

**Գիտահետազոտական աշխատանքի** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն

կազմակերպվում է ուսումնառության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաձևավալով:

**Գիտահետազոտական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաձևավալ:

**Գիտամանկավարժական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաձևավալ:

**Մագիստրոսական թեզի** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաձևավալ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է «Ռադիոտեխնիկայի և կապի» ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

## Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

### 14/M01. Հեռահաղորդակցության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

#### Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հեռահաղորդակցության հիմունքները, ինչպես նաև ժամանակակից թվային կապի հիմնական տարրերը:

#### Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կունենա** ընդհանուր գիտելիքներ ժամանակակից հեռահաղորդակցության հիմունքների վերաբերյալ,

2. **կկազմի** որոշակի պատկերացումներ թվային կապի համակարգերի մասին,

3. **կստանա** հեռահաղորդակցության ոլորտի վերաբերյալ նախնական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ կլինեն հետագա ուսումնառության ընթացքում:

#### Բովանդակությունը.

**Թեմա 1'** Թվային և անալոգային ազդանշանների համեմատությունը սպեկտրալ և էներգետիկ տեսանկյունից: Անալոգային ազդանշանի թվայնացումը դիսկրետացում և քվանտացում: **Թեմա 2'** Քվանտացման աղմուկները, հավասարաչափ և փոփոխական քայլով քվանտացում: Թվային ազդանշանի ներկայացումը որպես կապուղու իմպուլսային կոդեր և նրանց համեմատումը: Բազմամակարդակային հաղորդում: **Թեմա 3'** Թվային ազդանշանի անցումը գծային շղթաներում, թողարկման շերտի սահմանները: Թվային ազդանշանի և աղմուկների վեկտորական ներկայացումը, ազդանշան աղմուկ հարաբերությունը որպես կապուղու կարևորագույն բնութագրիչ: **Թեմա 4'** Ազդանշան աղմուկ խառնուրդի անցումը գծային ընդունիչում և բինար ազդանշանի որոշման սխալի հավանականությունը: Համաձայնեցված զտիչ և նրա իրականացումը: **Թեմա 5'** Միջսիմվոլային վերադրումը որպես կապուղու ոչ իդեալական լինելու արդյունք, Նայկվիստի գոտիներ: Շերտային մոդուլման եղանակները: Կոհերենտ և ոչ կոհերենտ ընդունման եղանակները տարբեր մոդուլումով ազդանշանների համար: **Թեմա 6'** Լայնեցված սպեկտրով ազդանշանների հատկությունները և նրանց կիրառումը բազմահասանելիության խնդիրներում: Լայնացնող հաջորդականությունների կորելյացիոն և ինքնակորելյացիոն հատկությունները Լայնացված սպեկտրով ազդանշանների կիրառումը մոբիլ բջջային ցանցերում: **Թեմա 7'** OFDM-ն որպես բազմակրող հաղորդում և իրականացումը FFT եղանակով: Մինքրոնիզացման եղանակները OFDM-ում: Ապասինքրոնիզացման և փուլային աղմուկների ազդեցությունը ազդանշան աղմուկ հարաբերությունների վրա: **Թեմա 8'** Ոչ գծային ազդեցությունը OFDM ազդանշանների վրա PAPR և պայքարի եղանակները: Բազմահասանելիության եղանակները OFDM համակարգերում: Մեկ հաճախության ցանցեր, DVB-ի հիմունքները:

#### Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

#### Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:



Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**16/M01. Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կծանոթանա** դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,

**2. ձեռք կրերի** մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,

**3. կծանոթանա** միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: *Թեմա 2*՝ Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: *Թեմա 3*՝ Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: *Թեմա 4*՝ Ռ. Դեկարտը որպես եվրոպական ռացիոնալիզմի հիմնադիր: *Թեմա 5*՝ Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: *Թեմա 6*՝ Նեոկանտականություն: *Թեմա 7*՝ Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): *Թեմա 8*՝ Երկրորդ պոզիտիվիզմ (Սախ, Դյուգեմ, Պուանկարե), *Թեմա 9*՝ Ամերիկյան պրագմատիզմ: *Թեմա 10*՝ Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ, *Թեմա 11*՝ XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: *Թեմա 12*՝ Պոստպոզիտիվիզմ: *Թեմա 13*՝ Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: *Թեմա 14*՝ Հերմենևտիկական որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: *Թեմա 15*՝ Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: *Թեմա 16*՝ Լեզվի փիլիսոփայությունը: *Թեմա 17*՝ Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: *Թեմա 18*՝ Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում մագիստրոսի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Լրացական դասընթացներ**

**18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն-1-2) (0 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգաթղթ*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ակտիվացնել ուսանողների արդեն ձեռք բերած լեզվական գիտելիքների ու հմտությունների կիրառումը մասնագիտական նպատակներով, ընդլայնել մասնագիտական բառապաշարը, զարգացնել մասնագիտական թեմաների շուրջ բանավոր և գրավոր հաղորդակցվելու հմտությունները:

Ուսուցումն ընդգրկում է խոսքային գործունեության բոլոր տեսակները՝ ունկնդրել, խոսել, կարդալ, գրել: Հաղորդակցական հմտությունների զարգացումն իրականացվում է զեկուցումների, բանավեճերի, քննարկումների միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում անգլերեն կենդանի խոսքի ունկնդրման և ընկալման հմտություն զարգացմանը՝ անգլերեն լեզվով հեռուստահաղորդումների, ֆիլմերի դիտում և քննարկում, ինչպես նաև գրավոր խոսքի հղկմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մասնագիտական ենթալեզվին բնորոշ կառուցվածքային առանձնահատկություններին:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կլիմանա** խորացված մասնագիտական բառապաշար,

2. **կրնկալի** կենդանի անգլերեն խոսքը՝ լուրեր, կինոնկարներ, ռադիոհաղորդումներ և կկարողանա քննարկել դրանք,

3. **կկարողանա**

3.1. վերարտադրել բնագիր մասնագիտական տեքստեր,

3.2. ազատ հաղորդակցվել անգլերենով թե ընդհանուր բնույթի տարբեր թեմաների շուրջ, թե մասնագիտական նպատակներով:

### **Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ The prominent scientists of the 20-th century. *Թեմա 2*՝ Computer Empire. *Թեմա 3*՝ How Microsoft came into being. *Թեմա 4*՝ Opera Software. *Թեմա 5*՝ Bill Gates and Steven Jobs-their strategy for achieving success. *Թեմա 6*՝ The concept of mobile phones. *Թեմա 7*՝ Writing a solid resume. *Թեմա 8*՝ Fossil fuel vs. Renewable energy. *Թեմա 9*՝ Alternative energy resources. *Թեմա 10*՝ Nuclear energy-its advantages and disadvantages while forecasting the future.

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թեստի դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

## **Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ**

**14/M02. Վիճակագրական ռադիոֆիզիկա** (3 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Ինֆորմացիայի փոխանակման ժամանակ օգտակար ազդանշանի հետ մեկտեղ անխուսափելի է աղմուկների (խանգարումների) առկայությունը: Աղմուկները կոռելացված չեն օգտակար ազդանշանի հետ և պայմանավորված են ինֆորմացիան ընդունողից անկախ հանգամանքներով (բնական, արդյունաբերական աղմուկներ, հարակից ռադիոկայանների ճառագայթում, ներքին աղմուկներ և այլն): Վիճակագրական ռադիոֆիզիկա

առարկան ուսումնասիրում է աղմուկի վիճակագրական պարամետրերը և նրանց փոխակերպումների օրինաչափությունները, որոնց իմացությունն անհրաժեշտ է ազդանշան-աղմուկ խառնուրդից օգտակար ազդանշանի որակյալ գտում իրականացնելու համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**կարող է**

1. պարզաբանել Վիճակագրական ռադիոֆիզիկայի հիմնախնդիրները
2. ուսումնասիրել Պատահական պրոցեսների հիմնական վիճակագրական պարամետրերը
3. հետազոտել Ազդանշան-աղմուկ խառնուրդը՝ այդ խառնուրդից ազդանշանի օպտիմալ գտում իրականացնելու համար:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1՝* Վիճակագրական ռադիոֆիզիկա առարկան, նրա հիմնական խնդիրները: *Թեմա 2՝* Պատահական մեծություններ և պրոցեսներ: Նրանց մաթեմատիկական նկարագրումը: *Թեմա 3՝* Ստացիոնար և էրգոդիկ պատահական պրոցեսներ: *Թեմա 4՝* Պատահական պրոցեսների սպեկտրալ-կորելացիոն տեսություն: *Թեմա 5՝* Պատահական պրոցեսների փոխակերպումը գծային համակարգերում: *Թեմա 6՝* Էլեկտրական աղմուկներ և ֆլուկտուացիաներ: *Թեմա 7՝* Պատահական պրոցեսների փոխակերպումը ոչ գծային համակարգերում: *Թեմա 8՝* Ազդանշանի հայտնաբերումը աղմուկի մեջ: *Թեմա 9՝* Պատահական դաշտեր և ալիքներ: *Թեմա 10՝* Ինֆորմացիայի տեսության հիմունքներ: Ազդանշանի կոդավորման հիմունքներ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**14/M03. Ազդանշանների թվային մշակման մաթեմատիկական հիմունքներ (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ազդանշանների թվային մշակման խնդիրների, կիրառությունների, զարգացման հիմնական ուղղությունների հետ: Ուսումնական գործունեության ընթացքում կրեդիտային համակարգով ուսանողին համակարգված ուսուցանել ազդանշանների թվային մշակման մաթեմատիկական հիմունքներն ու հիմնական մեթոդները: Նրանց մոտ այդ ոլորտում ձևավորել տեսական հիմնարար գիտելիքներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**կիմանա**

1. ազդանշանների թվային մշակման նպատակներն ու խնդիրները:

2. ազդանշանների թվային մշակման հիմնական մեթոդներն ու ալգորիթմները:

3. հաստատուն պարամետրերով համակարգերի հաշվարկման, նախագծման մեթոդները:

4. ազդանշանների թվային մշակման հիմնական ալգորիթմների իրագործման ձևերը:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ներածություն: Դիսկրետ գծային համակարգեր: Հաստատուն պարամետրերով գծային համակարգեր: **Թեմա 2՝** Փաթեթ: Համակարգի իմպուլսային բնութագիրը: Թեորեմ համակարգի կայունության մասին: **Թեմա 3՝** Ընդհանրացված ֆունկցիաներ, գործողություններ նրանց հետ: Մինգուլյար ֆունկցիոնալներ: **Թեմա 4՝** Ընդհանրացված ֆունկցիաների ածանցումը: Կետում կենտրոնացված ֆունկցիոնալի ընդհանուր տեսքը: **Թեմա 5՝** Հաստատուն գործակիցներով գծային տարբերություններով հավասարումներ: **Թեմա 6՝** Ֆուրյեի շարք, Դիրիխլեի թեորեմը: Ֆուրյեի ինտեգրալային ձևափոխություն, նրա հատկությունները: **Թեմա 7՝** Հաստատուն պարամետրերով գծային համակարգերի հաճախականային բնութագրերը: **Թեմա 8՝** Z- ձևափոխություն, նրա հատկությունները: Տարբերություններով հավասարումների լուծումը Z - ձևափոխության միջոցով: **Թեմա 9՝** Փոխանցման (համակարգի) ֆունկցիա: Վերջավոր երկարությամբ իմպուլսային բնութագրերով (ՎԻԲ) թվային ֆիլտրեր: **Թեմա 10՝** Գծային փուլային բնութագրով (ՎԻԲ) ֆիլտրերի հաճախականային բնութագրերը: **Թեմա 11՝** Գծային փուլային բնութագրով ՎԻԲ ֆիլտրերի զրոների տեղաբաշխումը, հաշվարկման մեթոդները, կառուցվածքը և սխեմաները: **Թեմա 12՝** Մետրիկական տարածություններ, լրիվ մետրիկական տարածություններ: **Թեմա 13՝** Գծային, նորմավորված տարածություններ: **Թեմա 14՝** Էվկլիդյան տարածություններ, օրինակներ: Օրթոգոնալ համակարգեր: Թեորեմ օրթոգոնալացման մասին: **Թեմա 15՝** Բեսելի անհավասարությունը: Փակ օրթոգոնալ համակարգեր: **Թեմա 16՝** Բիօրթոգոնալ համակարգեր:

#### **Քնությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քնություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քնություն**

Եզրափակիչ քնությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

#### **14/M04. Ինֆորմացիայի տեսություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

#### **Նպատակը.**

Ժամանակակից ինֆորմացիայի տեսության օգնությամբ լուծվում են բազմաթիվ խնդիրներ, ինչպիսին է օրինակ՝ ինֆորմացիոն համակարգերի նախնական էսկիզային նախագծումը: Խիստ կարևոր է այդ փուլում կատարել ճիշտ ընտրություն, ինչը կապահովի հետագա աշխատանքների բարեհաջող ընթացքը: Տվյալ առարկայի նպատակն է՝ ուսումնասիրել ինֆորմացիոն

համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները և դրանց կիրառությունները գիտության եւ տեխնիկայի զանազան ոլորտներում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** ինֆորմացիայի հուսալի տեղափոխման եղանակները

**2. կկարողանա** հասկանալ ինֆորմացիայի և էնտրոպիայի փոխհարաբերակցությունը,

**3. կտիրապետի** ինֆորմացիոն պրոցեսներում մասնակցող ինֆորմացիայի քանակի գնահատականներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ինֆորմացիայի ներկայացման ձևերը: Հաղորդակցությունների ձևափոխություն: **Թեմա 2՝** Էնտրոպիայի հասկացությունը որպես անորոշության չափանիշ: Պայմանական էնտրոպիա: Էնտրոպիայի և ինֆորմացիայի փոխհարաբերակցությունը: **Թեմա 3՝** Ինֆորմացիա և ինֆորմացիոն աղբյուրներ: **Թեմա 4՝** Տվյալների խտացման եղանակներ: Խտացում առանց կորուստների: **Թեմա 5՝** Խտացման այբուբենային եղանակներ: LZ ալգորիթմերի ընտանիք: **Թեմա 6՝** Պատկերների խտացման եղանակներ: **Թեմա 7՝** JPEG ալգորիթմ: **Թեմա 8՝** Ինֆորմացիայի հաղորդում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**14/M05. Կողավորման հիմունքներ (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնառության ընթացքում ուսանողներին համակարգային գիտելիքներ հաղորդել «Կողավորման հիմունքներ» առարկայի, նրա հիմնական խնդիրների և այդ խնդիրների լուծման մեթոդների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս մագիստրանտը կարող է ձեռք բերել անհրաժեշտ տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով աշխատելու, ինչպես նաև հմտություններ և կարողություններ ինֆորմացիոն համակարգերի ուսումնասիրման և խնդիրները ինքնուրույն լուծելու համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** գծային կողավորման եղանակները,

**2. կկարողանա** հասկանալ կողավորման զանազան դրսևորումները,

**3. կտիրապետի** կողավորման զանազան եղանակների ալգորիթմերի կառուցմանը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Կողավորման խնդիրները և տեղը հեռահաղորդակցական համակարգերում: **Թեմա 2՝** Փաթեթային կողավորում և ապակողավորում:

Վիտերբի ապակողավորիչ: **Թեմա 3**՝ Ասիմետրիկ գաղտնագրություն: **Թեմա 4**՝ Քվանտային գաղտնագրություն: **Թեմա 5**՝ Կողմնորման կիրառությունը ռադիոլոկացիոն խնդիրներում: **Թեմա 6**՝ Ցիկլիկ ավելցուկային կոդեր: **Թեմա 7**՝ Հեմինգի կոդեր: **Թեմա 8**՝ Գրեյի կոդեր:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**14/M06. Հեռահաղորդակցական համակարգերի էլեկտրոնային բաղադրիչներ (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ԳԲՀ միկրոէլեկտրոնիկայի հիմունքներին, բնագավառի հիմնական տարրերին և նրանց նկարագրման մաթեմատիկական եղանակներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

**1. կիմանա** ԳԲՀ միկրոէլեկտրոնային սարքերի աշխատանքը,

**2. կհասկանա** նշված սարքերի մաթեմատիկական նկարագրությունը,

**3. կկարողանա** ինքնուրույն մշակել պարզագույն ԳԲՀ սարքերի համակարգչային մոդելներ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ ԳԲՀ պարզագույն հաղորդիչ և ընդունիչ համակարգի կառուցվածքը: Համակարգի բաղկացուցիչ մասերը: **Թեմա 2**՝ Գաղափար T և կվազի-T ալիքի ԳԲՀ հաղորդման գծերի մասին: ԳԲՀ հաղորդման գծերի հիմնական բնութագրերը: **Թեմա 3.** Գաղափար ԳԲՀ սարքերի մաթեմատիկական նկարագրման մասին: ԳԲՀ սարքերի մատրցական նկարագրման եղանակները: **Թեմա 4**՝ Գաղափար ABCD մատրիցայի մասին: Քառաբևեռների պատկերումը ABCD մատրցայի օգնությամբ: **Թեմա 5**՝ ԳԲՀ շղթաների նկարագրումը Ցրման S մատրիցայի օգնությամբ: ԳԲՀ բազմաբևեռ սարքերի նկարագրումը S մատրիցայի միջոցով: **Թեմա 6**՝ T կվազի-T ալիքի ԳԲՀ հաղորդման գծեր: Հաղորդման գծերի բնութագրերը: **Թեմա 7.** ԳԲՀ միկրոշերտային հաղորդման գծեր, համափուլ - քառակուսային: ԳԲՀ հզորության ճյուղավորիչներ: **Թեմա 8**՝ Մաքսիմում հզորության թեորեմը ԳԲՀ սարքերի նեղշերտ համաձայնեցում, Բոդեյի սահմանային թեորեմ: ԳԲՀ սարքերի համաձայնեցման առանձնահատկությունները: **Թեմա 9**՝ Ոչ գծային ԳԲՀ տարրական սարքերի մաթեմատիկական նկարագրումը: **Թեմա 10**՝ ԳԲՀ PIN դիոդը նրա կիրառումը ԳԲՀ զանազան հանգույցներում: PIN դիոդը որպես ԳԲՀ փոխանցատիչ սարք: **Թեմա 11**՝ ԳԲՀ Հաճախականության ձևափոխիչներ: ԳԲՀ դիոդային ոչ բալանսային և բալանսային խառնիչներ: **Թեմա 12**՝ Պարզագույն գծային ԳԲՀ ուժեղարարի մշակում տրանզիստորի տրված: S պարամետրերի օգնությամբ: ԳԲՀ գծային ուժեղարարի մոդելավորումը տրված տրանզիստորի S

մատրիցայի օգնությամբ. ԳԲՀ ուժեղարի նումինալ և մաքսիմալ ուժեղացման գործակից, ԳԲՀ ուժեղարի կայունության գործակից:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**14/M07. Ազդանշանների թվային մշակման հաշվողական եղանակներ (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ազդանշանների հիմնական թվային բնութագրերի հաշվարկման եղանակների հետ: Ուսանողին համակարգված ձևով ծանոթացնել ազդանշանների թվային մշակման սպեկտրալ մեթոդներին, դրանց ընթացքում առավել կիրառվող հիմնական դասական ձևափոխություններին, այդ ձևափոխությունների իրագործման արագ ալգորիթմներին: Ուսուցանել ազդանշանների թվային մշակման խնդիրներում լուծման համար անհրաժեշտ հաշվողական մեթոդները: Նրանց մոտ այդ ոլորտում ձևավորել տեսական հիմնարար գիտելիքներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կկարողանա**

1.1. հաշվարկել ազդանշանի հիմնական բնութագրիչ պարամետրերը:

1.2. կատարել ազդանշանների սպեկտրալ վերլուծություն անալիզ – սինթեզի համակարգերի միջոցով:

1.3. կատարել ազդանշանների բազմամասշտաբային սպեկտրալ վերլուծություն:

**2. կիմանա**

2.1. ազդանշանների սպեկտրալ մշակման նպատակներն ու խնդիրները:

2.1. ազդանշանների սպեկտրալ մշակման արագ ալգորիթմներն ու դրանց իրագործման ձևերը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ֆունկցիաների օրթոգոնալ համակարգեր և օրթոգոնալ ձևափոխություններ: **Թեմա 2՝** Հզորության, ամպլիտուդային և փուլային սպեկտրներ: **Թեմա 3՝** Փոխադարձ կոռելյացիա, ինքնակոռելյացիա, փաթեթ: Կոտելնիկովի թեորեմը: **Թեմա 4՝** Ֆուրյեի դիսկրետ ձևափոխություն, նրա հատկությունները: **Թեմա 5՝** Առնչություններ Ֆուրյեի շարքի, Ֆուրյեի անընդհատ և դիսկրետ ձևափոխությունների միջև: **Թեմա 6՝** Ֆուրյեի արագ ձևափոխություն: **Թեմա 7՝** Հաարի համակարգը: **Թեմա 8՝** Ուոլշի ֆունկցիաները: **Թեմա 9՝** Ուոլշի դիսկրետ ֆունկցիաները: Գրեյի կոդը: Դիադիկ և ըստ Հադամարի կարգավորված Ուոլշի համակարգերը: **Թեմա 10՝** Ուոլշ - Հադամարի դիսկրետ ձևափոխությունը: Ուոլշ - Հադամարի արագ ձևափոխությունը: **Թեմա 11՝** Վերջավոր ազդանշանների

գծային ձևափոխություններ: Անալիզի և սինթեզի ֆիլտրերի համակարգ: **Թեմա 12**՝ Ենթաշերտային կողավորման ներկայացումը մատրիցների միջոցով: Լապլասի բուրգը: **Թեմա 13**՝ Քառակուսային հայելային ֆիլտրեր: Ոչ համաչափ համակարգ: **Թեմա 14**՝ Պատուհանային ձևափոխություններ: Ինտեգրալային վեյվեյթ ձևափոխություն: **Թեմա 15**՝ Ազդանշանների բազմամասշտաբային ներկայացումը: Ֆունկցիայի վեյվեյթ ներկայացումը: **Թեմա 16**՝ Դիսկրետ վեյվեյթ ձևափոխություն, նրա մատրիցային նկարագրությունը: Հասարակ վեյվեյթ ձևափոխություն: Դոբեշի ֆիլտրեր:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**14/M08. Անտենաներ և ռադիոալիքների տարածում (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անտենաների տեսության հիմնական տարրերը, ժամանակակից անտենաների տեսակներն ու նրանց հիմնական բնութագրերը, ինչպես նաև ծանոթացնել ԳԲՀ ալիքների տարածման հիմնախնդիրներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կունենա** ընդհանուր գիտելիքներ անտենաների տեսության և ԳԲՀ ալիքների տարածման առանձնահատկությունների վերաբերյալ,

2. **կկազմի** որոշակի պատկերացումներ անտենաների տարատեսակների մասին (վիբրատորային, միկրոշերտային, հաճախասնկախ, ապերտուրային, փուլավորված ցանցերի և այլն),

3. **կտիրապետի** անտենաների հիմնական բնութագրերի հաշվման մեթոդներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Անտենաների հիմնական բնութագիրը: Հյուգենսի սկզբունքը և Հերցի տարրական ճառագայթիչը: **Թեմա 2**՝ Դիպոլային և մոնոպոլ անտենաներ: Միկրոշերտային անտենաներ և նրանց կիրառումը մոբիլ համակարգում: **Թեմա 3**՝ Ճեղքային ճառագայթիչ, ալիքատար ճեղքային ցանցեր: Ապերտուրային անտենաներ: **Թեմա 4**՝ Անդրադարձնող մակերեսով (պարաբոլիկ) անտենաներ: Ոսպնյակային անտենաներ, ներառյալ Ֆրենելային գոտիներով մակերեսներ: **Թեմա 5**՝ Գերլայնաշերտ անտենաներ՝ հիմնված միկրոշերտային և հելիկալ անտենաների վրա: Արտահոսքային անտենաներ և նրանց դիսպերսիոն հատկությունները: **Թեմա 6**՝ Փուլավորված ցանցերով 1D և 2D անտենաներ, ճառագայթի ղեկավարում: Ֆրակտալ բազմաշերտ անտենաներ և նրանց կիրառումը 4G և 5G համակարգում: **Թեմա 7**՝ Ռադիո գծի հատկությունների և կիրառվող անտենաների փոխկապակցվածությունը: Ռադիոալիքների տարածումը բարդ միջավայրերում,



բազմաձառագայթային տարածում: **Թեմա 8**՝ Ռադիոալիքների տարածումը մթնոլորտում և տեղումներում, հուսալի կապի երկարությունը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**14/M09. Ազդանշանների թվային մշակման պրակտիկում 1 (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ազդանշանների թվային մշակման խնդիրների, ուսումնասիրության մեթոդների, կիրառությունների, օրինաչափությունների, դրանց իրագործման ծրագրային միջավայրի ու միջոցների հետ պրակտիկ տեսանկյունից: Ծրագիրն ուսումնասիրելիս մագիստրանտը ձեռք կբերի պրակտիկ գիտելիքներ, կկարողանա նախագծել և մշակել ազդանշանների թվային մշակման ալգորիթմներ և ծրագրային համակարգեր:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կկարողանա**

**1.1.** տրված մուտքային և ելքային ազդանշաններով հաշվարկել համակարգի իմպուլսային և հաճախականային բնութագրերը, գտնել համակարգի փոխանցման ֆունկցիան:

**1.2.** ներկայացնել համակարգն առաջին և երկրորդ կարգի ֆիլտրերի միջոցով:

**1.3.** կիրառել ազդանշանների թվային մշակման հայտնի և ժամանակակից մեթոդներ, ալգորիթմներ, ծրագրեր, տեխնոլոգիաներ:

**1.4.** մշակել ալգորիթմներ և դրանց իրագործման ծրագրային համակարգեր:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Ծանոթություն (Matlab) ծրագրային միջավայրի հետ: **Թեմա 2**՝ Հիմնական գործողությունները և ղեկավարող օպերատորները: **Թեմա 3**՝ Զանգվածներ, մատրիցներ և պարզագույն գործողություններ նրանց հետ: **Թեմա 4**՝ Գրաֆիկների և մակերևույթների կառուցումը ծրագրային միջավայրում: **Թեմա 5**՝ Հաստատուն պարամետրերով գծային համակարգերի հաճախականային բնութագրերի ստացումը ծրագրային միջավայրում: **Թեմա 6**՝ Փոխանցման ֆունկցիայի և վերջավոր երկարությամբ իմպուլսային բնութագրերով (ՎԻԲ) թվային ֆիլտրերի հաշվարկներն ու կառուցումը: **Թեմա 7**՝ Հաստատուն պարամետրերով գծային համակարգերի փոխանցման ֆունկցիայի բնութագրերը, օրինակներ: **Թեմա 8**՝ Փոխանցման ֆունկցիայի ներկայացումը առաջին և երկրորդ կարգի ֆիլտրերի փոխանցման ֆունկցիաների միջոցով, օրինակներ: **Թեմա 9**՝ Գծային փուլային բնութագրով (ՎԻԲ) ֆիլտրերի հաճախականային բնութագրերի հաշվարկներն ու գրաֆիկների կառուցումը ծրագրային միջավայրում: **Թեմա 10**՝ Մետրիկական տարածություններ, լրիվ մետրիկական տարածություններ: Գծային, նորմավորված

տարածություններ, օրինակներ: **Թեմա 11**՝ Էվկլիդյան տարածություններ: Օրթոգոնալ համակարգեր: Վեկտորների համախմբի օրթոգոնալացում, ծրագրային միջոցներով: **Թեմա 12**՝ Բեսելի անհավասարությունը: Ազդանշանի վերլուծությունը ըստ տրված օրթոգոնալ համակարգի ծրագրային միջավայրում, օրինակներ: **Թեմա 13**՝ Բիօրթոգոնալ համակարգեր: Ըստ բիօրթոգոնալ համակարգի իրական ազդանշանի վերլուծություն ծրագրային միջոցներով: **Թեմա 14**՝ Աղմկոտ ազդանշանը իմպուլսային աղմուկներից գոման ալգորիթմներ, օրինակներ: **Թեմա 15**՝ Ազդանշանի որակի գնահատականներ: **Թեմա 16**՝ Դիսկրետ պատահական մեծության էնտրոպիա, սկզբնական և կենտրոնական մոմենտները, դրանց ծրագրային հաշվակը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**14/M10. ԳԲՀ ճառագայթման բնութագրերի չափման ֆիզիկական սկզբունքներ (3 կրեդիտ)**

**Շարաֆական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց**

**Նպատակը.**

